

«ՄԱՍԻՍՐ» 1850—1860-Ա.ԿԱՆ ԹԹ. ԻՏԱԼԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վ. Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Արևմտահայ քաղաքական հոսանքների պատմության մեջ նշանակալից տեղ ունի Կոստանդնուպոլսում լույս տեսած «Մասիս» պարբերաթերթը՝ անցյալ դարակեսին արդեն որոշակիորեն ձևավորված արևմտահայ լիբերալ-բուրժուական մտայնության արտահայտիչը և գաղափարափողոց։ Թերթն ընդգծված համակրանք էր տածում գեպի Նվրոպայում ծայր առած ազատագրական շարժումները, այդ հարցում հետնողականորեն պաշտպանելով աղգային ինքնուրույնության սկզբունքները։ Սակայն ազատագրության նպատակին ուղղված ժողովրդական զինված ապստամբությունները նա ընդունում էր այնքանով, որքանով դրանք օժանդակում էին աղգային բուրժուազիայի սոցիալ-քաղաքական ծրագրերին և մերժում էր այդ շարժումների հեղափոխական բնույթը, դրանց «վտանգավոր» հետևանքներից խուսափելու համար դեռադասելով խաղաղ. ռեֆորմիստական մեթոդները։

Քննարկվող ժամանակահատվածում աշխարհի ուշադրությունն իրենց վրա էին բեռել իտալական ժողովրդի ջանքերը՝ ավստրիական լծից ազատագրվելու և միացյալ Իտալիա ստեղծելու համար։ «Մասիսը» և նրա գաղափարախոսները հսկայական նշանակություն էին տալիս այդ իրադարձություններին և թերթի շատ համարների առաջին էջերը հատկացնում էին դրանց լուսաբանմանը։

Իտալական ազատադրական շարժումների պատմության տարբեր փուլերում, հատկապես գարիբալդիական ազատամարտերի նկատմամբ, «Մասիսն» ունեցել է տարբեր վերաբերմունք, որի փոքր-ինչ հանգամանալից քննությունը մեզ կարևոր է թվում՝ արևմտահայ լիբերալիզմի էությունը ճիշտ բնութագրելու տեսանկետից։

Նոր էին մարել իտալական 1849 թ. հեղափոխության արձագանքները, դեռ թարմ էր չրշողությունը Մաձձինիի հռչակած Հռոմի հանրապետության մասին (որի կործանմանը նպաստեց նաև իշխանության գլուխ անցած Լուի Բոնապարտը՝ Հռոմ ուղարկելով զինված ուժեր), երբ 1850-ական թթ. վերջերին իտալական ժողովուրդը հուլումների մի մեծ ալիք բարձրացրեց՝ ավստրիական լուծր թոթափելու, պապի աշխարհիկ իշխանությունից Հռոմը ազատելու և Իտալիան միավորելու համար։

Հեղափոխական ճանապարհով Իտալիան ազատագրելու կողմնակիցներն էին իտալական ժողովուրդի առաջնորդներ Մաձձինին և Դարիբալդին, բայց սրանց ծրագիրը ձախողվում կամ անհաջողության էր մատնվում, որովհետև վճռական պահին հրաժարվելով արմատական միջոցներից, զիջումներ էին անում շարժման հաջողությունից օգուտներ քաղող բուրժուազիային և նրան հարող խոշոր աղնվականությանը։

Լուի Բոնապարտն ամեն կերպ աշխատում էր շփոթել համաշխարհային կարծիքը, իր միջամտությունը ներկայացնելով որպես անշահախնդիր օգնություն իտալական ժողովրդին։ Բուրժուական ազգային-ազատագրական գործիչներից շատերը հավատում էին։ որ Լուի Բոնապարտը ազատագրելու է Իտալիան Ալպերից մինչև Ադրիատիկ ծովը¹։

1859 թ. Ավստրիային հայտարարված պատերազմը հայրենասիրական մեծ ալիք բարձրացրեց Իտալիայում։ Գարիբալդին իր կամավորներով ավստրիացիների դեմ կռվում էր աննկարագրելի քաջությամբ։ Սակայն Լուի Բոնապարտը, վախեցած ժողովրդական այդ շարժումներից և գերմանական պետությունների կողմից սպասվող միջամտությունից, կոպիտ կերպով խախտեց իր խոստումը՝ Իտալիայի հյուսիսն ազատագրելու մասին և 1859 թ. հուլիսին Վիլլաֆրանկայում կնքած դաշնագրով Ավստրիայից վերցրած Լոմբարդիան «ղիջեց» Սաբոնիայի թագավորությանը, Ավստրիային թողնելով Վենետիկը։

Դաշնագրի կնքումով, սակայն, չղաղարեցին, այլ, ընդհակառակը, ավելի մեծ ծավալ ստացան իտալական ժողովրդական ազատագրական ընդվզումները։ 1860 թ. Սիցիլիայում բռնկվեց գյուղացիական մեծ ապստամբություն, որին մասնակցեց Գարիբալդին իր նշանավոր «հաղարով»։ Ապստամբության քոցը շուտով կլանեց Իտալիայի ողջ հարավը։ Սեպտեմբերի 7-ին Գարիբալդին որպես հաղթող մտավ Նեապոլիտանական թագավորության մայրաքաղաք՝ Նեապոլ, որտեղից արդեն փախուստ էր տվել Բուրբոնների ներկայացուցիչը²։

Ձայնակցելով մյուս երկրների լիբերալ բուրժուական մտայնությանը, «Մասիսը» մինչև այստեղ համակրում ու փառաբանում էր Գարիբալդին, որպես Իտալիայի ազատարարի, միացյալ իտալական թագավորության ստեղծողի, որպես ազգային հերոսի։

1860 թ. սեպտեմբերի 8-ի համարում թերթը, գովեստներ չխնայելով, բարձրացնում է իտալական ազգը միավորող հերոսին։ Նրա մուտքը Նեապոլ դիտում է որպես հաղթողի մուտք աշխարհի մայրաքաղաքը։ «...Ծրելու հարյուր կանայք՝ դաշույններով զինյալ առջևեն կերթային քաղաքին փողոցներուն մեջ։ Կարիպալտի բաց կառքի մը մեջ նստած էր, և անթիվ ժողովուրդ կերթային ետեվեն», — գրված է այնտեղ³։ Նույն համարում քաղվածքներ են բերվում անգլիական թերթերից, վկայակոչելով այն մեծ արձագանքը, որ դտել է գարիբալդիական շարժումը Անգլիայում, որ «կարգե դուրս համակրություն մը կա Կարիպալտիին և անոր ձեռնարկություններուն վրա։ Ամեն կողմ ստակ կհավաքվի անոր խրկելու համար, և հաղարավոր երիտասարդներ կամավոր զինվոր կը գրվին ու նավերով Սիկիլիա ու Նաբուլի կերթան։ Շատ ալ թնդանոթ, հրացան ու պատերազմական մթերք կը խրկվին Կարիպալտիին»։ Հուսադրված դրսից դարիբալդիականներին ցույց տրվող օգնությամբ, թերթը մի ուրիշ համարում⁴ հրձվաճախով արձանագրում է. որ Ամերիկայից նույնպես քսան և հինգ հազար հրացան է առաքվել Անգլիա՝ Գարիբալդին հանձնելու համար, իսկ նշանավոր զորապետը հանձնաժողով է ուղարկել Անգլիա՝ «հեշյալ հրազեններն ընդունելու»։ Հետագա համարներից մեկի առաջին էջում «Մա-

¹ Տե՛ս «Կ. Մարքսը և Գ. էնգելսը արվեստի մասին», Երևան, 1963, հատ. 1, էջ 489 և 749-ի ծան.։

² Տե՛ս «Всемирная история», т. VI, М., 1959, էջ 531—533։

³ «Մասիս», 1860, № 448։

⁴ Նույն տեղում, № 436։

սիսը» գրում է, թե «Բուսալիայի մեջ դեպքերն այնպիսի կարգի դուրս արագության մը վրա հաջորդեն իրարու, որ ամեն նախատեսությունները կը շփոթեն և հետևանքներուն վրա մտածելու ժամանակ չեն թողուր»:

Հեղափոխությունը Կարիսպալտիի ձեռք Սիկիլիայի մեջ հաղթանակելուն վրա շատ շանցավ, քանի մը ավուր մեջ Նաբուլիի թագավորության տիրապետեց, և հիմա իր դեմքը պապական տերության վրա դարձուցած է: Եկած լուրերուն նայելով, պապին աշխարհական թագավորության ալ բաղդը վճռական կրնա համարվիլ»⁵, 1860 թ. սեպտեմբերի 22-ին հատուկ առաջնորդող նվիրելով իտալական դեպքերին և Գարիբալդիի հաջողություններին, «Մասիսը» գրում է. «Հեղափոխությունը վերջապես տապալեց իր դեմը նշած բոլոր արգելքները և Իտալիո թերակղզույն տիրապետեց»⁶: Անշատ, Հռոմի և կամ Նեապոլի թագավորությունները պատմության գիրկն անցան, գրում է թերթը:

Կարևոր է այստեղ ևեթ նշել, թե ինչն է համարում «Մասիսը» այդ «հեղափոխության» հաղթանակի դրավականը. «Հեղափոխության այս հիանալի հաջողության պատճառ, պերոհիշյալ երկու տերությանց 10—12 տարիե ի վեր բռնած սխալ ընթացքը և այն ընթացքին վրա կամակորության մեջ համառի մնալը եղավ»: Փոխանակ այդ տերությունները, շարունակում է թերթը, իրենց սորությունն ու ուժը իրենց հսկատակների սիրուն ու համակրության մեջ փնտրելու, «մեկը իր՝ և մյուսն օտարին սվիններուն և թնդանոթներուն մեջ փնտրեց. փոխանակ դարուս ոգուն միտ դնելու և հնարավոր զիջումներով ժողովրդյան զգացումը գոհ ընելու, առաջինը արհամարհեցին և երկրորդը հեղձուցանելու ուզեցին լրտեսություններով, բանտերով, շղթաներով, աքսորներով, զավազանով, սրով, սվինով: Ասանկ անտանելի վիճակ մը չէր կրնար շարունակիլ իննևտասներորդ դարուս եվրոպային մեջ, և հարկավոր օր մը փոթորիկ մը պիտի ելեր»: Թերթը մեծ հաճույքով նշում է, որ այդ փոթորկի առաջնորդը՝ Գարիբալդին, ոտքը իտալական հողի սահմանը դնելուն պես՝ «բոլոր ժողովուրդն հետը միաբանեցավ և քանի մը ավուր մեջ Նաբուլիի թագավորին հղոր իշխանությունը վերցավ կղզույն մեջեն»⁷: Ժողովուրդը միացավ Գարիբալդիին և ընդունեց ֆրանսիական զենքի միջամտությունը, որովհետև նրանք թշնամի էին իրենց թշնամիներին: Այսպիսով, թերթը դեմ է բռնություններին, բանտերին և սվիններին, թնդանոթին ու զենքին և պաշտպանում է «դարիս ոգուն» համաձայն՝ ժողովրդական ուժի ու պահանջի առջև արվելիք խաղաղ զիջումները: Իտալական թագավորական տները չգնացին այդ բանին և այդ պատճառով ժողովուրդը ձեռք մեկնեց իր ազատարարին՝ Գարիբալդիին, որպեսզի նրա միջոցով հաստատի իրական կարգը՝ ազգային իշխանությունը, սահմանադրական միապետի գլխավորությամբ: Այսքանով է «Մասիսի» համար ընդունելի Գարիբալդիի պատմական առաքելությունը:

Երբ իտալական նորաստեղծ ազատության ղլխին ամպեր են կուտակվում և ավստրիական միապետությունը նորից փորձում է ձեռք բերել կորցրածը՝ «Մասիսի» համակրանքը ամբողջովին ուղղված է իտալական թագավորության կողմը: Թերթը գրում է. որ իտալական ժողովուրդը կդիմադրի ավստրիական զենքին, նրա դեմ կհանի 300 հազարից ավելի զորք, դրան գումարած նաև այն,

⁵ Նույն տեղում, № 449:

⁶ Նույն տեղում, № 450:

⁷ Նույն տեղում:

որ Գարիբալդիի կամավորները նույնպես հավաքվելու վրա են⁸։ Գարիբալդիին, հտալական ղինված ուժերին և Նապոլեոն III-ին «Մասիսը» դնում է նույն գծի վրա. երեքի էլ նպատակները, թերթի համոզմամբ, նույնն են, քանի որ, նրա կարծիքով, բոլորն էլ պայքարում են Իտալիան օտար լծից ազատագրելու և միացյալ թագավորություն ստեղծելու համար։ «Իսկ Գաղղիա ո՞նչ պիտի ընե, թե որ Ավստրիա նախահարձակ ըլլա Իտալիո վրա։ Գաղղիա չթողուր որ Մաճենթայի ու Սոլֆերինոյի հաղթություններուն արդյունքը եղող հտալական անկախությունը Ավստրիային հարված կրե»⁹։ Անհնարին է, շարունակում է թերթը երկու համար հետո, որ մեծ պոհերի գնով ձեռք բերված հտալական անկախությունը հեղտության մեջ զիջվի խավարամիտ ուժերին։ «Իտալիո ժողովուրդը դաբերե՛ր ի վեր փափագած և անբավ պոհերով հաղիվ ձեռք բերած անկախությունն ու միությունը՝ գինքը դարերով ընկճող հարստահարող տառապեցրնող նվաստացնող և աշխարհի աղգաց կարգեն ջնջելու աշխատող դրուծիան մը դոհե, ասիկա մտքե անցունել անգամ խելքի դեմ կերևի»¹⁰։

Իտալական ազդային-ազատագրական շարժման առաջին փուլի ու զենքը ձեռքն առած ժողովրդի առաջնորդ Գարիբալդիի նկատմամբ թերթի ունեցած համակրանքի արտահայտություն է և այն, որ «Մասիսը» հաղորդում է տպում, թե ինչպես Զմյուռնիայի հայ երիտասարդների մի խումբ 1861 թ. ապրիլի 16-ին այցելել է իտալական հյուպատոսարան և անձամբ իր շնորհավորանքները հայտնել հյուպատոսին, Վիկտոր էմանուել II-ի Իտալիայի միացյալ թագավորության կայսր ընտրվելու առթիվ¹¹։

Սակայն իտալական ղեկավարը շարունակում են վարդանալ։ Հոռոմ և Հոռոմի մարզը դեռևս մնում էին պապի իշխանության տակ, որին հովանավորում էին Լուի Բոնապարտի ղինված ուժերը։ «Մասիսը» շատ լավ էր պատկերացնում, որ այս պարագաներում Իտալիայի ազատագրման հարցը դեռևս լուծված չէ և օտար լծի տակ մնալու «վտանգը Իտալիայի զլխին դեռ շարունակում է կախված մնալ»։

1862 թ. Գարիբալդին, երկու հազար կամավորների գլուխն անցած, շարժվեց դեպի Հոռոմ։ «Հոռոմ, կամ մահ», — այս էր նրա նշանաբանը, որն ուղղված էր Ֆրանսիական տիրապետության դեմ՝ Նիցցայում և Սալոնայում, Ֆրանսիայի կողմից Հոռոմում պապի աշխարհիկ իշխանության հովանավորության դեմ և, վերջապես, Ավստրիական տիրապետության դեմ՝ Վենետիկում և Վենետիկի շրջանում։ Ապստամբության սկզբում գարիբալդիականներին ընդառաջ դնացին Վիկտոր էմանուելի թագավորական զորքերը։ Այս փուլում «Մասիսը» հույս ուներ, որ գարիբալդիականն ուր շարժումը նախկին արշավանքի հետևանքը կունենա։ Բայց շուտով իրագրությունը փոխվում է և առաջ է գալիս քաղաքացիական պատերազմի վտանգը։ Ֆրանսիական ուժի դեմ ընկրկած Վիկտոր էմանուելը ետ է քաշում իր զորքերը, որոնք հիմա արդեն պետք է կովեն զարիբալդիականների դեմ։ Թերթը տեսնում է վերջիններիս ու կառավարության միջև բացված վիճը և նահանջելով իր նախկին դիրքերից, պրում է, թե Գարիբալդին դեմ է կառավարությանը, որովհետև այն թույլ չի

⁸ Նույն տեղում, 1861, № 477։

⁹ Նույն տեղում։

¹⁰ Նույն տեղում, № 479։

¹¹ Նույն տեղում։

տալիս Հռոմի վրա քայլել և դեմ է Ֆրանսիային, որովհետև նա պաշտպանում է պապին: Թերթը տպում է նաև սենատոր Ֆերրարիի արտասանած ճառը, ուր վերջինս խորհրդարանի ներկայացուցիչներին հանդիմանելով անվճռականության մեջ, կոչ է անում չդիմադրել: «Գարիպալտի Իտալիո կը ծառայե, — ասում է Ֆերրարին», — իսկ դուք թագավորին»: Ժողովուրդը, այսինքն՝ Գարիբալդին, «ձեր ամեն ըրածին հաճությամբ տվալ: Առանց պատերազմ հրատարակելու Հռոմի և Նաբուլիի երկիրները մտնելնիդ ընդունեց: Բայց մը դիպչիք Գարիպալտիի, ապա թե ոչ՝ բոլոր թագավորության մեջ հեղափոխություն կելնե: Դուք եք որ կես ճամբուն կանդ առիք. ուրեմն ղդուշացեք հիմա ձնշում բանեցընելե: Ազատության դեմ կռվելուն հետևանքը լավ խորհեցեք, կաղաչեմ»¹²: Թերթը Ֆերրարիի հետ համամիտ է. որովհետև նա համոզված է, որ կառավարական զորքերի ու ֆրանսիացիների դիմադրության դեպքում կծագի քաղաքացիական պատերազմ, Գարիբալդին «հեղափոխություն» կսկսի, որից կարող է վտանգվել իտալական «նորածին ազատությունը»:

Դարիբալդիի սկսած «հեղափոխական փոթորիկի» դեմն առնելու գործում «Մասիսը» հույսը դնում է Նապոլեոն III-ի «ողջախոհության» վրա. նա է Իտալիային ազատություն տվել, ուրեմն՝ նա էլ պիտի կանխի պատրաստվելիք փոթորիկը: «Մասիսը» լավ է դիտակցում հարցի լրջությունը և ինչպես նշեցինք վերը՝ «վտանգն անցած» և իտալական պրոբլեմը լուծված չի համարում, քանի դեռ չի լուծվել Հռոմի խնդիրը¹³: Այլ խոսքով, վախենալով «այն շար հետևանքներից», որ կարող է բերել զարիբալդիական հեղափոխական փոթորիկը, նա միաժամանակ հանդիմանում է իտալական կառավարությանը և Ֆրանսիային, որոնք դանդաղում են լուծել Հռոմի հարցը և չեն տեսնում պատրաստվող հեղափոխությունը: Թերթը ատելությամբ է խոսում նաև պապի զորքերի գործադրած բռնությունների մասին և դրում է, թե դրանով նրանք աշխի են գրգռում «ժողովրդյան ատելությունը» և նրան «ղայրացնելե ղատ ուրիշ շահ մը» չեն բերում:

Գարիբալդիի նկատմամբ, որն արդեն ծավալել էր ժողովրդական շարժում և կոչում էր թագավորական ու ֆրանսիական զորքերի դեմ, թերթն առևս համակրանք չունի: Նա դեմ է բռնություններին, արյունահեղությանը և վախենում է հեղափոխությունից: Նա անտարբերությամբ է արձագանքում Ասպրոմոնտե սարի տակ Գարիբալդիի ծանր վիրավորվելու հանգամանքը և նրա զորքերի կրած պարտությունը: Դարիբալդիի մեկուսացմամբ անդամ թերթը իտալական ազատության գլխին կախված վտանգն անցած չի համարում և 1862 թ. սեպտեմբերի 1-ի համարում դրում է. «Գարիպալտի բռնվեցավ, բայց անոր բռնվելովը խնդիրը լուծված և վտանգն անցած չէ». որովհետև, պարզաբանում է «Մասիսը», «Գարիպալտիի վերջին ձեռնարկության նպատակը բոլոր իտալացվոց բաղձանքը պսակել ըլլալով, թեև ընտրած միջոցը ապօրինավոր էր, վտանգավոր էր, բայց Իտալիո ժողովրդյան բաղձանացը նպաստավոր էր»¹⁴: Ուրեմն, «Մասիսի» համոզմամբ, անհրաժեշտ էր զարիբալդիական ժողովրդական շարժումները նորից կառավարության ձեռնարկումներին միացնել, որպեսզի դրանով ավարտին հասցվեր իտալական ժողովրդի ձգտումը,

¹² Նույն տեղում, 1862, № 548:

¹³ Նույն տեղում, № 549:

¹⁴ Նույն տեղում:

Բստալիան վերջնականապես ազատագրվելու օտարների և Հռոմի պապի իշխանությունից և դրանով իսկ կանխվելու ժողովրդական ազատագրական շարժումը հեղափոխական «խոռվություն» վերածելու վտանգը, որին թերթը ամբողջովին դեմ է։ Այս սկզբունքն էր առաջնորդում «Մասիսին» Գարիբալդիի դեկլարացիոն ազատագրական շարժման երկրորդ փուլում։ Այդ սկզբունքից ելնելով է նա, մեկուսացնելով և մերժելով Գարիբալդիի «հեղափոխական խոռվությունը», միաժամանակ հանդիմանում Վիկտոր Էմանուելի կառավարությանը (թերևս նաև Նապոլեոն III-ին) այն բանի համար, որ նրանք չկարողացան օգտագործել ժողովրդական ուժերը՝ ավարտի չհասցրին Բստալիայի ազատագրության դործը, Հռոմը թողեցին դեռված, իսկ Գարիբալդիին կոչեցին ավագակ, բախտախնդիր։ Բայց չէ՞ որ, դրում է «Մասիսը», այդ նույն Գարիբալդին էր, որ երկու տարի առաջ օգնեց կառավարությանը ստեղծելու իտալական միացյալ թագավորություն։ Այն ժամանակ, երբ կառավարությունը նրան օգնեց, այդ նույն Գարիբալդին «առյուծ էր», «դուցալն», մեծ հայրենասեր էր։ Բայց է պատճառը, որ այս անգամ հերոսն այդպես անարգվում է։ Պատճառն այն է, որ իտալական կառավարությունը չուղեց երկրի ազատագրման գործը մինչև վերջ տանել և մեկուսացրեց Գարիբալդիին։ «Եթե Հռոմի պարիսպներուն ետևը,— գրում է «Մասիսը»,— Գաղղիո տեղ ուրիշ տերություն մը գտնվեր, Իտալիո կառավարությունը երկու տարի առաջ բռնած ընթացքը պիտի բռներ անշուշտ. այն է թողուլ Գարիբալտի որ իր պառասխանատվությանը ներքո Հռոմի վրա քալեր։ Եթե հաջողեր, դուցալնական գործ մը կրվար ըրածը և Իտալիո կառավարությունն ալ ուրախությամբ կընդուներ անոր արդյունքը. իսկ եթե հաջողեր, իրմե դատ մեկու մը վնաս չէր ըլլար»¹⁵։

Այսպես է հարցը լուծում թերթը։ Նա կողմնակից է ժողովրդի ազգային ազատագրությանը, նույնիսկ դեմ չէ այդ ազատագրության համար մղված զինված պայքարին, եթե այն չի հանգեցնում հեղափոխության և եթե հնարավոր չէ ազատությունը ձեռք բերել խաղաղ, բարենորոգումների ճանապարհով։ «Գարիբալտի բռնվիլն Հռոմի խնդիրը հեղափոխական միջոցներով լուծելու ձեռնարկության առաջին առավ, բայց խնդիրն անլուծ մնալով ալ ոչ Բստալիա կրնա խաղաղիլ և ոչ Հռոմ իր ներկա անշարժ վիճակին մեջ ապահով մնալ»¹⁶, — գրում է թերթը։

Հետագայում, երբ այլևս ոչ մի համերաշխում չէր կարող լինել գարիբալդիականների շարժման և ռեֆորմիստական քաղաքականության անցած Քավուրի միջև, «Մասիսն» արդեն ամբողջովին է մերժում գարիբալդիական շարժումը և իր տեսաբան Վ. Պառնասյանի բերանով պաշտպանում է կոմս Քավուրի տակտիկան. «Պ. Տր Քավուր և իտալական միությունը» տեսության մեջ թերթը գրում է. «Քավուր մը ավելի դործ և ու տեսնե, ավելի փառք ու պատիվ կունենա քան թե կարմիր շապկով Գարիբալտին, որուն խիղախ հանդգնությունը դեմ գնալ մը բավական է անդամալուծի պես մահիճը ձգելու համար»¹⁷։

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ Նույն տեղում, № 552։

¹⁷ Նույն տեղում, 1863, № 608։

Այսուհանդերձ, անցյալ դարի 60-ական թթ., մանավանդ 1860-ին, երբ Արևմտյան Հայաստանում հաղթանակում է լիբերալ-բուրժուական սահմանադրական դադափարախոսությունը, օտար լծի տակ տառապող իտալական ժողովրդի ազգային-ազատագրական շարժման վերաբերյալ «Մասիսի» հայտնած մտքերը պոլսահայ հրապարակախոսության առաջխաղացման ճանապարհին որոշակի նոր որակ ունեին։ Այդ երևույթն ավելի ցցուն է դառնում, երբ, մանավանդ, բազդատում ենք «Մասիսի» ու նրա համախոհների դիրքորոշումը նույն հողքի նկատմամբ արևմտահայ հետադիմական թևի դրսևորած վերաբերմունքի հետ։ Վերջինիս դադափարախոս Հովհաննես Չամուռճյանը 1860 թ. «Երևակում» տպված «Կարիպայտի և Իտալիա» հոդվածում գրում էր, թե Իտալիայի «մերանորոգությունը» երևութական է և դեմ է ավետարանի ու երոնի սեզբունքներին։ «Աղղասեր մարդրկ,— գրում էր նա,— որ աղգը կրլլան են ըլլան, միայն ազատութլուն և ազգային վերսնորոգութլուն անուններն խաբվելով՝ Բտալիալի աղատարար կարծված Կարիպայտին և անոր կոնակ կեցող կառավարութլունը երկնաշափ կը բարձրացրնեն։ Մենք այս եռանդը ո՛չ գովեցինք, ո՛չ պարսավեգինք, վերջը տեսնելու կը սպասեինք, որովհետև Կարիպայտի՝ Մածծինիին ուխավոր կուսակիցը և աջ բաղուն է. Խսկ Մածծինի անսահման ալատութլան կուսակից է, որ ո՛չ թագավոր կուզե աշխարհի մրա և ո՛չ որևիցե իշխանավոր թե՛ քաղաքական և թե՛ կրոնական մասին»¹⁸։ Այնպես որ ֆեոդալական դադափարախոսության այս պատգամախոսը ոչ միայն Գարիբալդիին ու Մածծինիին էր դեմ, որոնք ներկայացվում էին որպես անհույս անարխիստներ, այլև դեմ էր ընդհանրապես ազատագրական շարժանը, որը դուսևորում էր իշխանության ձգտող բուրժուական առաջնորդներ քաղաքական նպատակները։ «Բողոքականություն,— իտալական թերթերից մեծերերում կատարելով, դալրացած ոռլում է «Երևակը»,— և քահաներուն և կեղեղիներուն համար սո՛ւր. ահա՛ ասով կը նորոգի Իտալիա»¹⁹։

Հաևառակ «Մասիսի» լիբերալ դիրքորոշման և «Երևակի» բացարձակ ժխտողական վերաբերմունքի, «Մեղուն» անվերապահորեն ժողովրդական առաջնորդ Գարիբալդիի կողմն էր, և նրա ղեկավարած շարժման նկատմամբ ունեցած անկալութլուններով է միայն զնահատում իտալական ժողովրդի ալատադրական շարժման ուժը։ «Մեղուն» հաղվաղեպ է անդրառառնում եվրոպական երկրների անցուդարձին, այն էլ ինչ-որ չափով դրանք կապելով՝ հանդեսի բարուս-քաղաքական նպատակների հետ, սակայն Գարիբալդիին նվիրման հատուկ մի հոդված բացահայտում է այն սերն ու հիացմունքը, որ սարբերականն ունի դեպի իսկական ժողովրդական առաջնորդը, նրա վեհանձնութլանը տալով այն շուրքը, որով միայն ժողովուրդը կարող է մեծարել իր հերոսին։

«Ատենէ միյնը,— գրում է «Մեղուն»,— անուն մը կը հեղեղե ամեն բերան և աշխարհ ափ ո՛ր բերան կը նալի այն անվան տիրոջն ետևեն, դարմանքով կզիտե անոր մեկ շարժվածքը, դմալլելով ականջ կը դնե անոր ամեն խոսքերուն և սքանչանալով կը պատմե անոր աշխարհախնդիր առանձնութլունը, ուր ծածկել կը ցանկա ինքդինքը՝ իր փրկլալներուն իրեն ընծալլելու հարդանքը իրեն ծանրութլուն սը համարելով։ Այս անձը, առաքլալն Աստծո, կուզա մարդ-

¹⁸ «Երևակ», 1860, № 88, էջ 131—135։

¹⁹ Նույն տեղում։

կութւան բարերար ըլլալու և գերի ու ստրուկ ժողովուրդներու իրենց աղատութիւնը ստացնելով՝ կը քաշվի կ'առանձնանա իր տունը, ուրկէ ելած էր միայն 'ի վերուստ իրեն հանձնելու սլաշտոնը կատարելու ամենայն հավատարմությամբ:

Կարիպալտի Խտալիան ազատեց.

Կարիպալտի փոխարինութիւն մը չ'ընդունեց...

Տա՛ր երկինք, որ ամեն ընկճյալ ազգերու համար ալ այսպիսի անձինք հառնեն շախարհիս խաղաղութիւնը հաստատ հիմանց վրա գրվեր:

Կարիպալտի նոր ժամանակիս դուցադունը, նոր սերունդին սիրտը թնդացուց և նորահասակ Մեղուն նախանձեցաւ անոր և անոր փրկյալներուն բաղդին վրա՝ և ահա հոս կը դնէ անոր փառքն ավելցնող գովեստի հողված մը, աշխարհի էն մեծ ւրագրե մը»²⁰:

Անգլիական «Daily News»-ից արտատպւած այդ հոդվածը դարձյալ եվրոպական լրագրերից քաղված այն հաղվադեպ նյութերից էր, որոնց դիմում էր ամբողջովին հակական կյանքի մեջ խորասուղված «Մեղուն»: Բալլի Դարիբալդիի նկատմամբ եղած անկեղծ համակրանքը ստիպում է հանդեսին իր կարծիքը հաստատել նաև դրսի լրագրողների խոսքերով: «Daily News»-ից բերված հոդվածը, իհարկէ, իբեբալ մամուլի հիացական դուբետ էր հերոսի հասցեին, որը «վեհորեն» իր նվաճած ու ազատագրած երկիրը դրեց թագավորի ոտքերի տակ և քաշվեց գնաց իր գործին, «ավարտած» համարելով հայրենիքի հանդեպ ունեցած իր պարտքը: Այնինչ, գրում է անգլիական թերթը, որքան լավ կ'լինէր, եթէ «կարգ ու կանոն» սիրող, միապետության հովանու տակ հացկատակությամբ զբաղվող մարդիկ նմանվէին Դարիբալդիին, բռնավորութիւններ կործանէին, թագավորութիւններ բաշխէին և առանց անձնական փառասիրութեան՝ հայրենիքին ծառայէին: Բայց, ավաղ, Գարիբալդիի և Վաշինգտոնի օրինակները վարակիչ չեն, ազնվականներն ու դահերի հավակնորդները վայելում են իրենց կուրորեն հավատացողների վստահութիւնը, նրանք հեհեհ վազում ու չեն հասնում Գարիբալդիի ետեից, որովհետև Դարիբալդիին և Վաշինգտոնը «եղական պատկերներ» են²¹:

Այսպիսով, «Մեղուն» նախապատմութիւնը տալիս է Գարիբալդիի դեմոկրատիզմին և Խտալիայի աղատագրման պատիւը ամբողջովին վերագրում է նրան:

* * *

XIX դարի կեսերին Ավստրիական կայսրութեան մեջ տեղի ունեցող ներքին սոցիալական և քաղաքական տեղաշարժերը, որոնք պայմանավորված էին բուրժուական հարաբերութիւնների զարգացմամբ, նպաստում էին կայսրութեան լծի տակ ճնշված բաղմաթիւ ժողովուրդների, այդ թվում նաև հունգարների ազգային համախմբմանը:

1859 թ. Ֆրանսիայի և Սարդինիայի թագավորութեան ղեմ մղած պատերազմում Ավստրիայի կրած պարտութիւնը սասանեց նրա հեղինակութիւնը: Այդ հանգամանքը, ինչպիսի նաև իտալական ժողովրդի ազգային-աղատադրական շարժումները ոգևորեցին հունգարներին՝ նորից բարձրացնելու բողոքի

20 «Մեղուն», 1860, № 116, էջ 251:

21 Նույն տեղում, էջ 252:

ձայնը և հնչեցնելու 1848—1849 թթ. հունգարական հեղափոխության լողունգները:

Ավստրիական Ֆրանց-Իոսիֆ կայսրը երկրում մեծ թիվ կազմող մադյար խոշոր կալվածատերերին իր կողմը զրավելու միտումով հրապարակեց այսպես կոչված «Հեկտեմբերյան դիպլոմը», որով ավստրիական թագավորական նեղ խորհուրդը ընդլայնվում էր խոշոր կալվածատերերի կողմից Ռայխսրատ ուղարկվելիք նոր պատգամավորներով: Բայց այդ օրենքը չբավարարեց ոչ միայն հունգարական խոշոր բուրժուազիային, այլև կալվածատիրությանը: 1860 թ. հունգար երիտասարդությունը հրաժարվեց ղինվորագրվելուց, ամբողջ երկրով մեկ ծավալվեց «Մոտենում է հաշվեհարդարի օրը» կոչը:

Ապստամբների մեջ մեծ դժգոհություն առաջացրեց նաև 1861 թ. հրապարակված սահմանադրությունը, որը ընտրական բարձր ցենզի պատճառով ժողովրդին փաստորեն զրկում էր ընտրություններին մասնակցելու հրավերներից: Այդ սահմանադրությունը մերժվեց: Հունգարական սելմը հրաժարվեց Վիեննա՝ Ռայխսրատին պատգամավորներ ուղարկելուց և ցրվեց նույն 1861 թ., Հունգարիայում հայտարարվեց պաշարողական դրություն:

Ի վերջո, հունգարական վերնախավի նախաձեռնությամբ անցյալ դարի 60-ական թթ. ծայր առած դժգոհությունները պսակվեցին Հունգարիան Ավստրիայից անջատելու համաձայնագրով: Բանակցությունները, որ սկսվեց էին 1865 թ., ավարտվեցին 1867 թ. ավստրո-հունգարական երկպետության ստեղծումով²²:

Հունգարական այս անցուդարձերը նույնպես խիստ հետաքրքրում և իրենց վրա են բեկոռում «Մասիսի» ուղադրությունը, թերթը հիմնադրման օրից շարունակում էր հունգարական հեղափոխության նկատմամբ իր նախորդի՝ «Հայաստանի» ունեցած համակրական գիւրքորոշումը:

«Մասիսը» մեծ սիրով է անդրադառնում այն փառավոր ընդունելությանը, որին արժանացել էր Կոշուտը Նյու-Յորքում և ակնհայտ շարախնդությամբ նշում է, թե ինչպես այդ բանը մեծ պայրույթ է առաջացրել ավստրիական դեսպանությունում: Հետագայի համարներից մեկում ճշտելով իր այս տեղեկությունը, գրում է, թե Վաշինգտոնում գտնվող պ. Հյուլսմանը հրաժարական է տվել և մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգներից ոչ այնքան այն պատճառով, որ Ամերիկայի ժողովուրդը այդպես մեծարել է Կոշուտին, այլ որովհետև «արտաքին գործոց պաշտոնյա պ. Ուեպսդը» նրան պատվել է հրապարակով²³: Կոշուտի լոնդոնյան բնակարանում հայտնաբերված զենքի մեծ քանակը թերթին հույսեր է ներշնչում դեպի հունգարական ազատագրական շարժման նոր բոնկումները, և «Մասիսին» մղում է շեշտել այդ փաստը, դրելով. «Լոնտրայի տեսչությունը անվանի Քոշուտին բնակած տան մեջը շատ զենքեր և պատերազմական պաշարներ գտավ: Այս բանը մեծ աղղեցություն բրավ Լոնտրայի մեջ»²⁴:

22 Տե՛ս «Всемирная история», т. VI, с. 547 և հտ.:

23 «Մասիս», 1852, № 2, 3, 21:

24 Նույն տեղում, 1853, № 65: Ի ռեա. հունգար հեղափոխականների ճակատագիրը հետաքրքրում էր ոչ միայն առատամիտ «Մասիսին», այլև իր դավանած քաղաքական գծով «Մասիսից» խիստ տարանջատվող և բուրժուազիայի առաջխաղացմանը յուրօրինակ ձևով դիմագրավող «Բանասերին» ու նրա խմբագիր Հովհաննես Հիսարյանին, որը 1851 թ. անդրադառնալով

Զգալի է «Մասիսի» համակրանքը, հետաքրքրությունը և ուշադրությունը նաև դեպի մյուս հունգար տարագիրները: Զննողական ողջ հասարակությունը հուզված էր ավստրիական ղինվորական նավում հունգար հեղափոխական Մարտին Կոստայի բանտարկության պատճառով: «Մասիսը» ոգևորությամբ նյութեր է ապում այն մասին, որ Զննողական հասարակությունը ստիպմամբ ոտքի է հանվել ամերիկյան հյուպատոսարանը, ամերիկյան մի ռազմանավ առաջարկել է ավստրիացիներին՝ աղատել բանտարկյալին, հակառակ դեպքում սպառնալով զնդակոծել ձերբակալվածին տանող նավը: Ավստրիական հյուպատոսը, վախենալով միջազգայի բարդացումից, հրամայել է աղատ արձակել Մարտին Կոստային: «Մասիսը» նկարագրում է այս առթիվ ղմյուռնիացիների ապրած ցնծությունը: «Լենբավ բաղնիքում, որոնց մեջ Զննողական կրեկի վաճառականներ ալ կային, ծովեղերքը լեցված մեծ ուրախությամբ և համակրության ցույցերով ղիմավորեցին պ. Քոսթան ցամաքը ևլած ժամանակը, և մինչև հիվանդանոց ուղեկից եղան անոր... մայրաքաղաքիս մեջ գտնվող փախստական հունգարացիներն ու իտալացիներն ալ պ. Քոսթայի աղատության լուրը առնելով, հինգշաբթի իրիկուն Պեյօղլու Ամերիկային ղեսպանին պալատին առջև նվազարաններով երգեցին Կեցցե Ամերիկա, կեցցե ղեսպանն Ամերիկալ, կեցցե պ. Մարչ աղաղակեցին, պ. Մարչ ալ պատուհանը ձլելով, Կեցցե Հունգարիա, Կեցցե Իտալիա պատասխանեց»²⁵:

Ակնհայտ է այն ոգևորությունը, որ ապրել են արևմտահայերը հունգար և իտալացի ժողովուրդների մղած ազատագրական պայքարի տարիներին և այն ակնկալությունները, որ ունեցել են նրանք եվրոպական ժողովուրդների բնորոշումներից: Այդ ակնկալություններն են պատճառը, որ «Մասիսը» մեծ ուշադրությամբ սկսեց տպագրել նյութեր՝ 1860 թ. ծավալված հունգարական դեպքերի վերաբերյալ:

Թերթը նախ ոգևորվում է այն մտքից, որ հունգարացիները երբեք կարող են վերականգնել 1848—1849 թթ. նվաճած իրենց սկզբունքները: 1860 թ. մայիսի 26-ին «Մասիսում» հաղորդում է տպվում այն մասին, որ Վիեննայից Փարիզի «Debats» պարբերականին հասած լուրերի համաձայն «Ավստրիո կառավարությունը վերջապես Մաճարոստանի բնակչաց սիրտը գոհ ընելու համար՝ իրենց հին սահմանագրությունը վերահաստատելու որոշում ըրեր է»²⁶: Թերթն ուզում է հավատալ այս իրադրությանը, որը նա արդարացի է գտնում: Նոսքն, անշուշտ, 1860 թ. հոկտեմբերին Ֆրանց-Իոսիֆի հրապարակած ղիպլումի մասին էր, որի նշանակությունը թերթն ակնհայտորեն գերազնահատում է: Նույն թվականի հոկտեմբերի 27-ին դարձյալ անդրադառնալով հունգարական դեպքերին, «Մասիսը» գրում է. «Ավստրիո կայսեր իր ժողովրդյանը շնորհած սահմանադրությունը մեծ ուրախություն պատճառեց հիշյալ տերության բոլոր երկիրներուն մեջ» և հատուկ շեշտում է. որ «Հունգարիայի (Մաճարոստան) ալ սահմանադրական օրենքները պիտի մերահաստատվին, հունգարացվոց լեզուն պաշտոնական լեզու պիտի ըլլա երկրին կառավարական և դատաստանական գործերուն մեջ: Ինչի համալսարանն ալ պիտի բացվի» և

հունգարական գեպքերին, բավականությամբ է արձագանքում իրենց ազատության համար արյուն թափած հունգարների հերոսությանը (տե՛ս «Բանասեր», 1851, էջ 49, 483):

²⁵ «Մասիս», 1853, № 75, ինչպես նաև № 86, 91:

²⁶ Նույն տեղում, 1860, № 433:

ընդհանրացնում է. «մեկ խոսքով 1849-են առաջ հունգարացի ունեցած բոլոր արտոնությունները պիտի վերահաստատվին»²⁷։

Այս խաղաղ բարեփոխումների մեջ թերթը տեսնում է ներքին հեղափոխություններից խուսափելու և բարենորոգումների ճանապարհով ցանկացած սահմանադրական ինքնավարության հասնելու բաղձալի միջոցը և գոհ է դրանից։

Բայց ի վերջո «Մասիսի» համար պարզվում է. որ հունգարները դժգոհ են խոստացված «բարեփոխումներից», որոնք ժողովրդին առանձին արտոնություններ չեն խոստանում, և անմիջապես անցնելով հունգարների ներկայացրած պահանջների կողմը՝ 1862 թ. դեկտեմբերի 22-ին գրում է. «Սա պատճառով որ հունգարացիք իրենց 1848-ին սահմանադրության ճանաչումը կը խնդրեն Ավստրիո կառավարութենեն, և Վիեննայի երեսփոխանանան ժողովին ալ իրենց կողմանե անդամներ ընտրել չեն ուղեր»։ «Մասիսը» ամսոսանքով նշում է. որ հունգարական հարցը խաղաղ ճանապարհով լուծելու խնդիրը և «Հունգարիո ազնվականներու հաշտարար ջանքը» «պարապ ելավ», «հետևաբար Հունգարիո վիճակը դարձյալ անորոշ կը մնա՝ վտանգավոր հետևանքներու սպառնալիցաներքե»²⁸։ «Մասիսը» վախենում է այդ «սպառնալից» և «վտանգավոր» հետևանքներից, որոնք, պարզ է, պիտի հանգեցնեն հեղափոխական դեպքերի։

Բայց բոլոր պարագաներում պետք է ընդգծել այն հանգամանքը, որ թերթը համակրում և քաջալերում էր ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը և այդ նպատակին հասնելու համար նրանց գործադրած միջոցները, ընդհուպ մինչև ազգային բուրժուազիային լծորդված զինված պայքարը, սկզբունք, որից ձևավորվում էր «Մասիսի» և արևմտահայ լիբերալ-բուրժուական մտավորականության վերաբերմունքը դեպի հայ ազգային-ազատագրական շարժումներն ու ժողովրդական ընդվզումներն ընդհանրապես։

ГАЗЕТА «МАСИС» ОБ ИТАЛЬЯНСКОМ И ВЕНГЕРСКОМ
НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОМ ДВИЖЕНИИ
1850—1860 гг.

В. Г. ГУКАСЯН

(Резюме)

В 50-х гг. XIX в. в западноармянской действительности четко вырисовываются различные политические направления, в том числе либерально-буржуазное, органом которого стала газета «Масис». В статье анализируется положительное отношение газеты к национально-освободительному движению в Италии и Венгрии, что способствует выяснению важного момента в политической направленности западноармянского либерального течения и одновременно помогает глубже понять позицию либералов по отношению к освободительному движению самих западных армян.

²⁷ Նույն տեղում, № 455։

²⁸ Նույն տեղում, № 567։